# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/47

ք. Երևան «30» նոյեմբերի 2020 թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Բեգլարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ. Խորենացի 3,7 | Հասցե՝ ք. Երևան, Ազատության 24-306 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 00144521 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 163058801172 |
| ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար | Տնօրեն |
| Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ ________ (ստորագրություն) | Լ.Բեգլարյան ________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«30» նոյեմբերի 2020թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/47 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը* |
| 1 | 50531140/7 | Կատարողը պետք է իրականացնի արտադրական վտանգավոր օբյեկտի (կաթսայատան) տեխնիկական անվտանգության վկայագիր փորձաքննություն համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 594-Ն հրամանի: Ստորև ներկայացված է կաթսայատաների գտնվելու վայրը և շահագործվող կաթսաները:<br>1. ք. Երևան, Աhարոնյան 12/3, 2 հատ (Ferroli մոդելի, 32 Կվտ , ընդհանուր 64 Կվտ)<br>2. ք. Երևան, Աhարոնյան 12/3, 2 հատ (Ferroli մոդելի, 32 Կվտ, ընդհանուր 64 Կվտ)<br>3. ք. Երևան, Մանթաշյան 55, 4 հատ (Valman Super Star մոդելի , 32Կվտ, ընդհանուր 128 )<br>4. ք. Երևան, Շինարարների 3/1, 3 հատ (ITALTHERM մոդելի, 24Կվտ ընդհանուր 72 Կվտ)<br>5. ք. Երևան, Շինարարների 3/1, 3 հատ (ITALTHERM մոդելի, 24Կվտ 72 Կվտ)<br>6. ք. Երևան, Մոլդովական 41/3, 3 հատ (WALLCON մոդելի, 36, ընդհանուր 108 Կվտ)<br>7. ք. Երևան, Անդրանիկի 37/1, 2 հատ (Squirrel մոդելի, 32Կվտ, ընդհանուր 64 Կվտ)<br>8. ք. Երևան, Անդրանիկի 37/1, 2 հատ (Squirrel մոդելի, | դրամ | 300 000 | 1 | ք. Երևան, Աhարոնյան 12/3<br>ք. Երևան, Մանթաշյան 55<br>ք. Երևան, Շինարարների 3/1<br>ք. Երևան, Մոլդովական 41/3<br>ք. Երևան, Անդրանիկի 37/1<br>ք. Երևան, Հյուսիսային փ. 6 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 32Կվտ, ընդհանուր 64 Կվտ)<br>9. ք. Երևան, Էրեբունու համայնք, Հյուսիսային փ. 6, 2 հատ (Ariston մոդելի, 32Կվտ, ընդհանուր 64 Կվտ) | | | | | |
| 2 | 50531140/11 | Կատարողը պետք է իրականացնի արտադրական վտանգավոր օբյեկտի (կաթսայատան) տեխնիկական անվտանգության վկայագիր փորձաքննություն համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 594-Ն հրամանի: Ստորև ներկայացված է կաթսայատաների գտնվելու վայրը և շահագործվող կաթսաները:<br>1. Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հովսեփյան 1, 2 հատ (Valman մոդելի, 32Կվտ, ընդհանուր 64 Կվտ)<br>2. Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խորենացի 21, 1 հատ (Ferroli մոդելի, 77,5 Կվտ )<br>3. Շիրակի մարզ, գ. Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4, 5 հատ (Schuster մոդելի, 24 Կվտ, 120 Կվտ)<br>4.Շիրակի մարզ, գ. Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4, 3 հատ (Schuster մոդելի, 24 Կվտ, ընդհանուր 72 Կվտ)<br>5. Շիրակի մարզ, գ. Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4, 3 հատ (Schuster մոդելի, 24 Կվտ, ընդհանուր 72 Կվտ) | դրամ | 150 000 | 1 | Շիրակի մարզ, ք.Գյումրի, Հովսեփյան 1<br>Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խորենացի 21<br>Շիրակի մարզ, գ. Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 3 | 50531140/9 | Կատարողը պետք է իրականացնի արտադրական վտանգավոր օբյեկտի (կաթսայատան) տեխնիկական անվտանգության վկայագիր փորձաքննություն համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 594-Ն հրամանի: Ստորև ներկայացված է կաթսայատաների գտնվելու վայրը և շահագործվող կաթսաները:<br>1. Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց 11, 2 հատ( KBY-0,05 մոդելի , 50 Կվտ, 100 Կվտ)<br>2. Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մոսկովյան 44, 3 հատ (BAXI մոդելի, 28, ընդհանուր 84 Կվտ) | դրամ | 100 000 | 1 | Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց 11<br>Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մոսկովյան 44 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 4 | 50531140/10 | Կատարողը պետք է իրականացնի արտադրական վտանգավոր օբյեկտի (կաթսայատան) տեխնիկական | դրամ | 100 000 | 1 | Կոտայքի մարզ, ք. Հրազդան, | Ծառայության մատուցումն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | անվտանգության վկայագիր փորձաքննություն համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 594-Ն հրամանի: Ստորև ներկայացված է կաթսայատների գտնվելու վայրը և շահագործվող կաթսաները:<br>1. Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սպանդարյան 24/1, 24/2, 2հատ (BAXI մոդելի, 32 Կվտ, ընդհանուր 64 Կվտ)<br>2. Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության 1, 4 հատ (BAXIմոդելի, 32 Կվտ, ընդհանուր 128 Կվտ) | | | | Սպանդարյան 24/1, 24/2 Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության 1 | իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 5 | 50531140/8 | Կատարողը պետք է իրականացնի արտադրական վտանգավոր օբյեկտի (կաթսայատան) տեխնիկական անվտանգության վկայագիր փորձաքննություն համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 594-Ն հրամանի: Ստորև ներկայացված է կաթսայատների գտնվելու վայրը և շահագործվող կաթսաները:<br>1. Տավուշի մարզ, ք. Իջևան, Անկախության 12, 2 հատ (Ariston մոդելի, 32Կվտ, ընդհանուր 64 Կվտ)<br>2. Տավուշի մարզ, ք. Իջևան, Անկախության 12, 2 հատ (Ariston մոդելի, 32Կվտ, ընդհանուր 64 Կվտ)<br>3. Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69, 4 հատ (Shuster մոդելի, 32Կվտ, ընդհանուր 128 Կվտ)<br>4. Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69, 3հատ (Shuster մոդելի, 32Կվտ, 96 Կվտ)<br>5. Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69, 3 հատ (Helman մոդելի, 24Կվտ, ընդհանուր 72 Կվտ) | դրամ | 100 000 | 1 | Տավուշի մարզ, ք. Իջևան, Անկախության 12<br>Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 6 | 50531140/16 | Կատարողը պետք է իրականացնի արտադրական վտանգավոր օբյեկտի (կաթսայատան) տեխնիկական անվտանգության վկայագիր փորձաքննություն համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 594-Ն հրամանի: Ստորև ներկայացված է կաթսայատների գտնվելու վայրը և շահագործվող կաթսաները:<br>1. Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Նար-Դոս 11 3 հատ (Mercuri մոդելի, 26Կվտ, ընդհանուր 78 Կվտ) | դրամ | 50 000 | 1 | Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Նար-Դոս 11 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 50531140/14 | Կատարողը պետք է իրականացնի արտադրական վտանգավոր օբյեկտի (կաթսայատան) տեխնիկական անվտանգության վկայագիր փորձաքննություն համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 594-Ն հրամանի: Ստորև ներկայացված է կաթսայատաների գտնվելու վայրը և շահագործվող կաթսաները:<br>1. Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մինասյան 20ա, 2հատ (Valman մոդելի, 36 Կվտ, ընդհանուր 72 Կվտ) | դրամ | 50 000 | 1 | Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մինասյան 20ա | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 8 | 50531140/13 | Կատարողը պետք է իրականացնի արտադրական վտանգավոր օբյեկտի (կաթսայատան) տեխնիկական անվտանգության վկայագիր փորձաքննություն համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 594-Ն հրամանի: Ստորև ներկայացված է կաթսայատաների գտնվելու վայրը և շահագործվող կաթսաները:<br>1. Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Սայաթ-Նովա 1/1, 2 հատ (Fondital մոդելի, 32Կվտ, ընդհանուր 64) | դրամ | 50 000 | 1 | Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Սայաթ-Նովա 1/1մարզ, | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 9 | 50531140/15 | Կատարողը պետք է իրականացնի արտադրական վտանգավոր օբյեկտի (կաթսայատան) տեխնիկական անվտանգության վկայագիր փորձաքննություն համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 594-Ն հրամանի: Ստորև ներկայացված է կաթսայատաների գտնվելու վայրը և շահագործվող կաթսաները:<br>1. Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Պռոշյան 29, 2 հատ (Squirrel մոդելի, 32Կվտ, ընդհանուր 64 Կվտ) | դրամ | 50 000 | 1 | Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Պռոշյան 29 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 10 | 50531140/12 | Կատարողը պետք է իրականացնի արտադրական վտանգավոր օբյեկտի (կաթսայատան) տեխնիկական անվտանգության վկայագիր փորձաքննություն համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 594-Ն հրամանի: Ստորև ներկայացված է կաթսայատաների գտնվելու վայրը և շահագործվող կաթսաները: | դրամ | 50 000 | 1 | Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Նարեկացի 8/3 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1. Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Նարեկացի 8/3, 2 հատ (Mira gren մոդելի, 32Կվտ, ընդհանուր 64 Կվտ) | | | | | |

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ փարվա դեկփեմբերի 25-ը:*

*** Կապարողը ծառայության մափուցման ընթացքում պետք է ներկայացնի Հայասփանի հավափարմագրման ազգային մարմնի կողմից փրված հավափարմագրման վկայագիր:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>ք. Երևան, Մ. Խորենացի 3,7<br>ՀՎՀՀ 02647057<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011054013<br>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար | «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն»<br>ՍՊԸ<br>Հասցե՝ ք. Երևան, Ազատության 24-306<br>ՀՎՀՀ 00144521<br>Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Արաբկիրի մ/6<br>Հ/Հ 163058801172<br>Տնօրեն |
| Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ ____________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Լ.Բեգլարյան ____________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 2
«30» նոյեմբերի 2020թ. կնքված
ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/47 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ ՊԵԿ 2020թ. բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50531140/7 | փորձաքննության ծառայություններ 1 | | | | | | | | | | | 300 000 | 300 000 | 300 000 |
| 2 | 50531140/11 | փորձաքննության ծառայություններ 2 | | | | | | | | | | | 150 000 | 150 000 | 150 000 |
| 3 | 50531140/9 | փորձաքննության ծառայություններ 3 | | | | | | | | | | | 100 000 | 100 000 | 100 000 |
| 4 | 50531140/10 | փորձաքննության ծառայություններ 4 | | | | | | | | | | | 100 000 | 100 000 | 100 000 |
| 5 | 50531140/8 | փորձաքննության ծառայություններ 5 | | | | | | | | | | | 100 000 | 100 000 | 100 000 |
| 6 | 50531140/16 | փորձաքննության ծառայություններ 6 | | | | | | | | | | | 50 000 | 50 000 | 50 000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 50531140/14 | փորձաքննության ծառայություններ 7 | | | | | | | | | | | 50 000 | 50 000 | 50 000 |
| 8 | 50531140/13 | փորձաքննության ծառայություններ 8 | | | | | | | | | | | 50 000 | 50 000 | 50 000 |
| 9 | 50531140/15 | փորձաքննության ծառայություններ 9 | | | | | | | | | | | 50 000 | 50 000 | 50 000 |
| 10 | 50531140/12 | փորձաքննության ծառայություններ 10 | | | | | | | | | | | 50 000 | 50 000 | 50 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար

**Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ** ________________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ազատության 24-306
ՀՎՀՀ 00144521
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ
Հ/Հ 163058801172
Տնօրեն

**Լ.Բեգլարյան** ________________
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*« 30 » նոյեմբերի 2020թ. կնքված*
*ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/47 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հh ______________
հվhh ______________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հh ______________
հվhh ______________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 30» նոյեմբերի 2020թ. կնքված*
*ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/47 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _______________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

00144521

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն